# ԵՌԱՆԿՅՈՒՆԱՉԱՓԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ

## § 2. ԱՆԿՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄԸ: ՊՏՏՄԱՆ ԱՆԿՅՈՒՆ

Օրինակ 2: $19,2\pi$ ռադիան և 33 ռադիան անկյունները ներկայացնենք $\beta+2\pi k$ տեսքով, որտեղ $0\le\beta<2\pi$, իսկ $k$–ն ամբողջ թիվ է:

Տրված թվերը մնացորդով բաժանենք $2\pi$–ի: Ունենք՝

$$19,2\pi=2\pi\cdot 9+1,2\pi \quad (k=9, \quad \beta=1,2):$$

Այնուհետև, դժվար չէ ստուգել, որ $10\pi<33<11\pi$ , հետևաբար՝

$$33=(33-10\pi)+2\pi\cdot 5 \quad (k=5, \quad \beta=33-10\pi)$$

Օրինակ 3: Ժամացույցի րոպեասլաքն ի՞նչ անկյունով պետք է պտտել, որ ժամացույցի ցուցումը փոխվի. ա) 6 ր առաջ, բ) 6 ր հետ: (Սլաքները պտտել թույլատրվում է միայն ժամասլաքի պտտման ուղղությամբ):

Լուծում: ա) Քանի որ րոպեասլաքը 60 րոպեում կատարում է մեկ պտույտ, ուստի 6 ր–ում կկատարի $\frac{1}{10}$ պտույտ, այսինքն՝ $2\pi\cdot\frac{1}{10}=\frac{\pi}{5}$ ռադիան՝ ժամասլաքի ուղղությամբ: Սակայն ժամասլաքի շարժման ուղղությունը բացասական ուղղությունն է, նշանակում է՝ որոնելի անկյունը հավասար է $-\frac{\pi}{5}$–ի:

բ) Ժամ ցույց տվող սլաքները 12 ժամ հետո նորից (առաջին անգամ) կգրավեն սկզբնական դիրքը: Հետևաբար, խնդրի պահանջը կարելի է իրագործել, եթե րոպեասլաքը շարժենք (բացասական ուղղությամբ) $\left(12-\frac{1}{10}\right)$ պտույտով, այսինքն՝ $-\left(24\pi-\frac{\pi}{5}\right)=-23\frac{4}{5}\pi$ ռադ. անկյունով: